

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԻՆ**

թարմացված է 28.02.2020թ

Հ/Հ	ԴԻՄՈՂ	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
1.	Տաթև Տիգրանյան	«կարող եք ասել թե ինչպես կարող ենք նշանակվել հանձնաժողովի անդամների ցանկում տեղամասային ընտրական հանձնաժողովում: Դիմում եմ ինձ պատասխանում են, թե պետք է ինձ համար որևիցե մեկը ասած լինել իրենց ինչ է նշանակում եթե ծանոթ , բարեկամ խնամի չունենք չենք կարող: Խնդրում եմ պարզաբանեք: Դեռ չի վերջացել այդ ժամանակաշրջանը:»:	«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամ նշանակելու իրավունք ունեն «ԱՅՈ» և «ՈԶ» քարոզչության կողմերը՝ յուրաքանչյուրը երկու անդամ, և տարածքային ընտրական հանձնաժողովը՝ երեք անդամ:»: Այսինքն, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ նշանակելու իրավունք ունեն տարածքային ընտրական հանձնաժողովները և «ԱՅՈ» և «ՈԶ» քարոզչության կողմերը:
2.	Գարի Սիսակունի	«Հարց. Իմ գրանցումը Ն Նորքում է, սակայն ես բնակվում եմ իմ սեփական երկրորդ բնակարանում, որը գտնվում է կենտրոնում ու ցանկանում եմ քվիարկել կենտրոնում: ինչ է պետք անել»:	Ընտրական օրենսգիրքը և «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը նույն համայնքում հաշվառման հասցե փոխելու կարգավորում չեն նախատեսում: Ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածը սահմանում է ընտրողների ցուցակում ընդգրկվելու կարգը՝ համաձայն որի, Դուք կարող եք քվեարկել այն տեղամասում, որի ընտրողների ցուցակում ընդգրկված եք:
3.	Հայկ Հովհաննիսյան	«1. Նախապես քվեարկել թույլատրվում է եթե երկրից այդ ժամանակահատվածում անձը բացակայում է՝ 2. Այլ երկրներից հնարավորություն ընձեռնված է ՀՀ քաղաքացիների քվեարկության համար՝»	Ընտրական օրենսգիրքը և «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը նախապես քվեարկելու իրավունք չեն նախատեսում: Ընտրական օրենսգրքի 62-րդ հոդվածը սահմանում է էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, որի համաձայն՝ քվեարկության օրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվելու դեպքում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողները, օտարերկրյա պետություններում երկարատև ծառայողական

			գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից)՝ արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները կարող են քվեարկել էլեկտրոնային եղանակով:
4.	Կամո Կիրակոսյան	«Առանց հաշվառման բնակվում եմ Երևանում, համատիրությունից վերցրել եմ տեղեկանք հանրաքվեի ցուցակում ընգրկվելու համար: Խնդրում եմ ինձ ուղարկել կարգը, ժամկետները:»	Ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողներն Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցելու համար քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ լիազոր մարմին ներկայացնում են դիմում՝ ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին՝ նշելով քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողին ընդգրկում է քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և այդ մասին նրան տրամադրում տեղեկանք:»:
5.	Լուսինե Մնացականյան	Մոտակա ամիսները գտնվելու եմ արտերկրում ու ֆիզիկապես չեմ կարող մասնակցել հանրաքվեին: Ցանկանում էի տեղեկանալ՝ կարո՞ղ եմ առցաց տարբերակով քվեարկել, կամ կա՞ ընտրատեղամաս հսպանիայի թագավորությունում:	Ընտրական օրենսգրքի 62-րդ հոդվածը սահմանում է էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, որի համաձայն՝ քվեարկության օրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվելու դեպքում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողները, օտարերկրյա պետություններում երկարատև ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողների, ինչպես նաև Հայաստանի

			<p>Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից)՝ արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները կարող են քվեարկել էլեկտրոնային եղանակով:</p>
6.	Անժեղիկա Եղյան	<p>Բնակվում եմ Լոռու մարզի Սարչապետ-Արծնի համայնքում, մասնակցել եմ ընտրությունների համար կազմակերպված դասընթացներին, ունեմ վկայական, խնդրում եմ Ձեզ, որ աջակցեք ինձ համար, որ ինձ ընդգրկեն տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում</p>	<p>«Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամ նշանակելու իրավունք ունեն «ԱՅՈ» և «ՈԶ» քարոզչության կողմերը՝ յուրաքանչյուրը երկու անդամ, և տարածքային ընտրական հանձնաժողովը՝ երեք անդամ:»: Այսինքն, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ նշանակելու իրավունք ունեն տարածքային ընտրական հանձնաժողովները և «ԱՅՈ» և «ՈԶ» քարոզչության կողմերը:</p>